202 Կյանքում ամենաանհրաժեշտ բաները

1. Կյանքում ամենաանհրաժեշտ բաները
Մարդիկ փողի արժեքով չեն ձեռք բերում,
Ձրի է լուսավորում մեզ արևը,
Եվ լուսինը միշտ ձրի է մեզ ժպտում:

Աստված ձրի
Տալիս է մեզ թողություն,
Որպես պարգև՝
Տալիս է մեզ փրկություն:

2. Ձրի են մեր այգիներն ու դաշտերը
Հորդառատ անձրևով ջրվում երկնքից,
Թռչունների երգն ենք ձրի վայելում,
Երբ գովաբանում են նրանք Արարչին:

3. Բայց այս է ամենաթանկագին բանը՝
Աստծո կողմից պարգևված մարդկությանը,
Հիսուսի հետ հավիտենական կյանքը
Եվ երկնային պարգևը երջանկության:

4. Տե՛ս՝ ինչպես է Հիսուս երկնքից նայում
Եվ փայլում է ինչպես սիրո արևը:
Փողի արժեքով չեն մարդիկ ձեռք բերում
Կյանքում ամենաանհրաժեշտ բաները: